ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ.....4

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն 15

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ 22

3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը 31

Գլուխ 4. Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն 36

Հավելված.....37

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2017 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը, Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը և միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Առկա հիմնախնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը 2017 թվականին շարունակել է աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում,

բ) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի բացահայտում և համապատասխան որոշումների ընդունում,

գ) Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ դատական գործերի քննությանը մասնակցություն,

դ) Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունում և կատարելագործում,

ե) ապրանքային շուկաներում դիտանցումների, վերլուծությունների և ուսումնասիրությունների միջոցով Օրենքի հնարավոր խախտումների բացահայտում, կանխում և արգելում,

զ) ձեռնարկատիրության զարգացման նպաստում և սպառողների շահերի պաշտպանության նպատակով ազատ տնտեսական մրցակցության խրախուսում,

է) պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն,

ը) Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովում և հասարակության իրազեկում:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է և անկախ է այլ պետական մարմիններից: Հանձնաժողովի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Ինչպես նախորդ տարիների ընթացքում, այնպես էլ 2017 թվականին Հանձնաժողովն իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել մեր երկրում մրցակցության ոլորտին առնչվող խնդիրները: Հանձնաժողովի գնահատմամբ հասարակության շրջանում մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող ընկերությունները հաճախ նույնացվում են, ինչի արդյունքում թյուր տպավորություն է ձևավորվում հանրապետությունում առկա մենաշնորհների քանակի և ծավալի վերաբերյալ: Օրենքի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկաներում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե այդ ապրանքային շուկայում որպես իրացնող կամ ձեռքբերող չունի մրցակից: Մնացած բոլոր դեպքերում, երբ ապրանքային շուկաներում գործում են մեկից ավելի ընկերություններ, որոնց իրացման ծավալները գերազանցում են գերիշխող դիրքի հատկորոշման համար Օրենքով սահմանված շեմերը, այդ ընկերությունները համարվում են գերիշխող դիրք ունեցող: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում մենաշնորհային շուկաները հիմնականում կապված են բնական մենաշնորհների և պետության կողմից կոնցեսիոն կառավարմանը հանձնված ոլորտների հետ: Հանձնաժողովի կողմից իրականացված վերջին ուսումնասիրությունների համաձայն բազմաթիվ ապրանքային շուկաներում (պանրի, հացի, պահածոների, բնական հյութերի, թեյի, երշիկեղենի, մակարոնի, կենդանի ձկան, սառեցված ձկան, ոսպի, հնդկաձավարի, ձավարի, բրինձի, խոզի, տավարի մսի, օղու, գինու) կենտրոնացվածության մակարդակը ցածր է և գերիշխող դիրք ունեցող ընկերություններ առկա չեն: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թեև Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներում (գազավորված ըմպելիքների, կաթնամթերքի, հանքային ջրի, աղբյուրի ջրի,

շոկոլադե ապրանքների, դեղերի, սուրճի, կոնյակի, գարեջրի) գործել են խոշոր (գերիշխող դիրք ունեցող) ընկերություններ, այդուհանդերձ այդ ապրանքային շուկաներում առկա են տասնյակ իրացման փոքր և միջին ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Ինչը կարող է փաստել այն մասին, որ այդ ապրանքային շուկաներում ձևավորված է մրցակցային միջավայր: Հետևաբար խոշոր ընկերությունների առկայությունը դեռևս չի նշանակում, որ այդ շուկաներում մրցակցությունը սահմանափակ է: Միաժամանակ, խոշոր ընկերություններն ունենալով որոշակի մրցակցային առավելություն մյուս ընկերությունների նկատմամբ, և օգտվելով իրենց մրցակցային առավելությունից, կարող են առաջացնել այդ դիրքի չարաշահման ռիսկեր, մասնավորապես մյուս ընկերությունների համար ստեղծելով տվյալ շուկա մուտք գործելու խոչընդոտներ: Այդ առումով Հանձնաժողովը մշտապես հետևում է բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գործող ընկերությունների վարքագծին, որպեսզի կանխարգելի նրանց կողմից չարաշահումների իրականացումը:

Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ վիճակագրությունը և գործարար համայնքի ներկայացուցիչների հետ կազմակերպված բազմաթիվ քննարկումները փաստում են, որ վերջին տարիներին էապես բարձրացել է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը և գնալով ավելանում է իրենց գործունեության ընթացքում մրցակցային խնդիրների հանդիպած Հանձնաժողով դիմող տնտեսվարող սուբյեկտների թիվը: Բարձրացված խնդիրների լուծման արդյունքում բազմաթիվ շուկաներում մրցակցային միջավայրը բարելավվել է և հայտնվել են նոր ընկերություններ:

Տարբեր երկրներում տնտեսական մրցակցության քաղաքականությամբ և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական մարմինների կողմից իրականացվող գործունեության արդյունավետության և շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություններ է իրականացնում «Համաշխարհային տնտեսական ֆորում» միջազգային կազմակերպությունը: Կազմակերպության կողմից կատարվող ուսումնասիրությունները ներկայացվում են ամենամյա զեկույցների ձևով, որոնց շարքին է դասվում նաև Համաշխարհային մրցունակության զեկույցը: Նշված զեկույցում հաշվարկվում են մոտ 140 երկրների տնտեսական և հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ, որոնցից երեքը վերաբերում են երկրների տնտեսական մրցակցության միջավայրին և մրցակցային քաղաքականության արդյունավետությանը: Ընդհանուր առմամբ

Հայաստանի վերաբերյալ նշված երեք ցուցանիշների գծով 2010 թվականից ի վեր արձանագրվել է զգալի առաջընթաց: Մասնավորապես հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 2017 թվականին զբաղեցրել է 40-րդ հորիզոնականը, 2016 թվականին՝ 77-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 138-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 98 կետ (տես՝ Գծանկար N 1):

Գծանկար N 1

Հայաստանում և մի շարք երկրներում հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշի դինամիկան 2010-2017 թվականների ընթացքում



Մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշով 2017 թվականին Հայաստանը զբաղեցրել է 28-րդ հորիզոնականը, 2016 թվականին՝ 51-րդ հորիզոնականը՝ 2010 թվականի 133-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 105 կետ (տես՝ Գծանկար N 2):

Գծանկար N 2

Հայաստանում և մի շարք երկրներում մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշի դինամիկան 2010-2017 թվականների ընթացքում



Դիտարկվող հաջորդ ցուցանիշը ներքին շուկայում մրցակցության ուժգնությունն է, որի գծով 2017 թվականին զբաղեցրել ենք 66-րդ հորիզոնականը, 2016 թվականին՝ 91-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 136-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 70 կետ (տես՝ Գծանկար N 3):

Գծանկար N 3

Հայաստանում և մի շարք երկրներում ներքին շուկայում մրցակցության ուժգնության ցուցանիշի դինամիկան 2010-2017 թվականների ընթացքում



Միաժամանակ նշենք, որ ներկայացված ցուցանիշները միջազգային համեմատությունների տեսանկյունից Հայաստանի համար ապահովում են շատ ավելի նպաստավոր դիրք, քան ունեն տարածաշրջանային և ԱՊՀ անդամ որոշ երկրներ (տես՝ Հավելվածը):

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում իրականացրել է շուրջ 185 ուսումնասիրություն (այդ թվում՝ 2017 թվականին դեռևս չավարտված), որոնք հիմնականում վերաբերել են համակենտրոնացման գործարքներին, հնարավոր անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին, հակամրցակցային համաձայնություններին, անհավասար մրցակցային պայմաններին, մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահումներին: Նշված ուսումնասիրությունները Հանձնաժողովն իրականացրել է տնտեսվարող սուբյեկտներից, քաղաքացիներից, պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված դիմումների հիման վրա կամ մամուլում տեղ գտած հրապարակումների և իր գործունեության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության հիման վրա, սեփական նախաձեռնությամբ: Ընդ որում, իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքում առավել մեծ են եղել Հանձնաժողովի նախաձեռնությամբ և տնտեսվարող սուբյեկտներից ստացված դիմումների հիման վրա կատարված ուսումնասիրությունների մասնաբաժինները (տես՝ Գծանկար N 4): Փոխարենը ինչպես 2016 թվականին, այնպես էլ 2017 թվականին մամուլից, քաղաքացիներից, պետական մարմիններից և հասարակական կազմակերպություններից ստացված դիմումներն էապես փոքր ծավալ են կազմել, և ընդհանուր ուսումնասիրությունների կառուցվածքում նրանցից ստացված դիմումների հիման վրա կատարված ուսումնասիրությունները չեն գերազանցել 20 տոկոսը:

Գծանկար N 4

Հանձնաժողովի կողմից 2017 թվականին իրականացված ուսումնասիրությունների քանակը՝ ըստ տեղեկատվության ստացման աղբյուրների



Կատարված ուսումնասիրությունները թեև վերաբերել են տարբեր ոլորտներին՝ ծառայություններ, առևտուր, պարենային և ոչ պարենային ապրանքների արտադրություն և ներմուծում, էներգետիկա, շինարարություն, պետական գնումներ և այլն, այդուհանդերձ ուսումնասիրությունների կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին են ունեցել առևտրի և ծառայությունների, պարենային և ոչ պարենային ապրանքների ոլորտում կատարված ուսումնասիրությունները (տես՝ Գծանկար N 5):

Գծանկար N 5

Հանձնաժողովի կողմից 2017 թվականին իրականացված ուսումնասիրությունների քանակը՝ ըստ ոլորտների



Հանձնաժողովի կողմից 2017 թվականին կատարած ուսումնասիրություններում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման և կնքվող համակենտրոնացման գործարքների վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունները՝ համապատասխանաբար 32 և 47 տոկոս մասնաբաժիններով: Ինչ վերաբերում է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտումներին, ինչպես նաև ապրանքային շուկաների ուսումնասիրություններին, ապա դրանց մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 9, 3 և 9 տոկոս: Ընդ որում, ապրանքային շուկաների ուսումնասիրությունների շրջանակներում Հանձնաժողովը հիմնականում դիտարկել է շուկայի կառուցվածքը, նոր ընկերությունների կողմից շուկա մուտք գործելու, գործող ընկերությունների կողմից արտադրության, ներմուծման և իրացման ընդլայնման հնարավոր խոչընդոտները, շուկայում գործող ընկերությունների շահութաբերության մակարդակները, շուկայի ընդլայնման հնարավորությունները և այլն (տես՝ Գծանկար N 6):

Գծանկար N 6

Հանձնաժողովի կողմից 2017 թվականին իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքը ըստ Հանձնաժողովի գործառույթների



Միաժամանակ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շուրջ 40 տոկոսի դեպքում խախտվել են մրցակցության օրենսդրության դրույթները և իրավախախտ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Բացի այդ, ուսումնասիրությունների 23 տոկոսի պարագայում մրցակցության օրենսդրության խախտման դեպքեր չեն բացահայտվել, ուսումնասիրությունների 35 տոկոսը վերաբերել են համակենտրոնացման գործարքներին, իսկ սկսված ուսումնասիրությունների 2 տոկոսը դեռևս չի ավարտվել (տես՝ Գծանկար N 7):

Գծանկար N 7

Հանձնաժողովի կողմից 2017 թվականին իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքը ըստ դրանց արդյունքում ընդունված որոշումների



Հանձնաժողովը, հասարակական հետարքրքրություն ներկայացնող բոլոր ուսումնասիրությունների արդյունքները տարվա ընթացքում մշտապես ներկայացրել է հանրությանը՝ դրանով իսկ ապահովելով թափանցիկության և հաշվետվողականության բարձր մակարդակ:

Միաժամանակ, Հանձնաժողովի աշխատանքների օպերատիվության և արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստել է գործող թեժ գիծը, որի միջոցով քաղաքացիները մշտապես ներկայացնում են մրցակցային իրավախախտումների մասին տեղեկություններ, ինչը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս առանց լրացուցիչ ռեսուրսներ ծախսելու տեղեկանալ առկա խնդիրներին և համապատասխան քայլեր իրականացնել՝ դրանց լուծման ուղղությամբ:

Հանձնաժողովը մեծածավալ աշխատանքներ է իրականացնում միջազգային համագործակցության շրջանակներում՝ նպատակ ունենալով տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների լուծման գործընթացին ներգրավել նաև գործընկեր երկրների և կառույցների փորձն ու գիտելիքները: Այս առումով կարևորվում է հատկապես Միջազգային մրցակցության ցանցի (ՄՄՑ/ICN) կազմակերպության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի կողմից կազմակերպվող աշխատաժողովների, սեմինարների և քննարկումների հարթակի

օգտագործումը տարբեր երկրներում առկա մրցակցային ոլորտի խնդիրների լուծման գործում: Մասնավորապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները կատարելագործելու նպատակով 2017 թվականի ընթացքում վերապատրաստվել են ապրանքային շուկաների ուսումնասիրության, հակամրցակցային համաձայնությունների բացահայտման, դեղերի շուկայում մրցակցային խնդիրների գնահատման և այլ թեմաների շուրջ:

Հանձնաժողովը կարևորում է նաև ԵԱՏՄ և ԱՊՀ անդամակցության շրջանակներում մրցակցային մարմինների միջև իրականացվող փոխգործակցության շարունակականության ապահովումը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2016 թվականի ապրիլ ամսվանից սկսած ԱՊՀ անդամ-պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդը նախագահում է Հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը: Հանձնաժողովը վերջին տարիներին ակտիվորեն օգտագործում է նշված հարթակները հայկական արտադրողների շահերը ներկայացնելու և արտահանման շուկաներում ծագող խնդիրները լուծելու ուղղությամբ: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Հանձնաժողովը 2017 թվականին ինչպես ԱՊՀ, այնպես էլ ԵԱՏՄ մակարդակներում կատարել է համատեղ աշխատանքներ գործընկեր երկրների մրցակցային մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ արտահանման շուկաներում հայկական ապրանքների ներկայացվածության ընդլայնման, մուտքի խոչընդոտների բացահայտման և վերացման նպատակով:

Հանձնաժողովը միջազգային տարբեր կազմակերպությունների հետ իրականացվող համագործակցությանը զուգահեռ համապատասխան աշխատանքներ է իրականացնում նաև մրցակցային մարմինների միջև իրականացվող երկկողմ փոխգործակցության հաստատման և ընդլայնման ուղղությամբ: Այս առումով հատկանշական է Հայաստանի և Վրաստանի մրցակցային մարմինների միջև իրականացվող համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես այն, որ հաշվետու տարվա ընթացքում երկու երկրների մրցակցային մարմինների միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որով ավելի է ամրապնդվում և ընդլայնվում մրցակցային մարմինների միջև համագործակցությունը մրցակցային քաղաքականության իրականացման և օրենսդրության կիրարկման ոլորտում:

Վրաստանի մրցակցային մարմնի հետ իրականացվող համագործակցությունը կարևոր է նաև այն առումով, որ Հայաստանի ներմուծվող բազմաթիվ ապրանքների գնագոյացման վրա ազդող մի շարք կարևոր ծախսեր կատարվում են Վրաստանի տարածքում և համապատասխան շուկաներում ուսումնասիրություն իրականացնելիս Վրաստանի մրցակցային մարմնի հետ համագործակցությունը նպաստում է ուսումնասիրությունների արդյունավետությանը:

Մրցակցային մարմինների միջև իրականացվող երկկողմ փոխգործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատանքներում առանձնահատուկ մաս են կազմում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ կատարվող համատեղ ծրագրերը: Այս առումով Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ միջև համագործակցության շրջանակներում ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կազմակերպած քննարկումների, սեմինարների, համաժողովների և այլ միջոցառումների: Կատարվող համագործակցության շարունակականությունը ապահովելու նպատակով 2017 թվականի դեկտեմբեր ամսին ստորագրվել է Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի համատեղ աշխատանքային նոր ծրագիրը, որի հիման վրա նախատեսվում է համատեղ աշխատանքների իրականացում բազմաթիվ ուղղություններով: Բացի այդ, հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովն աջակցել է Արցախի գործընկերներին ինչպես ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, այնպես էլ համատեղ վարույթների իրականացման, փորձի և տեղեկատվության փոխանակման հարցերում:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Նպատակ ունենալով ՀՀ-ում ձևավորել արդյունավետ մրցակցային միջավայր՝ Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով նաև հսկողություն է սահմանում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ: Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերհանել դրանցում առկա մրցակցային խնդիրները և տալ գործուն լուծումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մամուլում նախկինում հանդիպել են հրապարակումներ ներմուծման ոլորտում մուտքի խոչընդոտների առկայության վերաբերյալ՝ Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև մի շարք ապրանքների ներմուծման բնագավառում, որը միաժամանակ նպատակ է հետապնդել պարզելու Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցության ազդեցությունը ներմուծման ոլորտի վրա: Կատարված ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են այնպիսի ապրանքատեսակներ, որոնք մի կողմից հանդիսանում են լայն սպառման և (կամ) սոցիալական նշանակության ապրանքներ, մյուս կողմից այդ շուկաներում ներմուծման մասնաբաժինը էական է: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկված 19 ապրանքային խմբերում (ալյուր, մարգարին, բրինձ, շաքարավազ, մակարոնեղեն, բուսական յուղ, հավի միս, խոզի միս, ոսպ, ոլոռ, ցորեն, եգիպտացորեն, շոկոլադե սալիկներ, բատոններ և այլ շոկոլադե ապրանքներ, կակաո, խնամքի պարագաներ, շամպուն, մաքրող միջոցներ) 2014-2016 թվականների ընթացքում ներմուծող ընկերությունների քանակն ավելացել է, որը փաստում է այդ շուկաներում մուտքի խոչընդոտների բացակայության և մրցակցային իրավիճակի էական բարելավման մասին: Նշված 19 ապրանքային շուկաներում ներմուծում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակը 2016 թվականին կազմել է 1 534՝ 2014 թվականի 940-ի փոխարեն: Այսպես օրինակ, շաքարավազի շուկայում 2016 թվականի տվյալներով ներմուծում է իրականացրել 48 տնտեսվարող սուբյեկտ, բանանի շուկայում՝ 40 տնտեսվարող սուբյեկտ, կարագի շուկայում՝ 45 տնտեսվարող սուբյեկտ և այլն: Շաքարավազի շուկայի գծով հարկ է նաև նշել, որ Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած Հայաստանում գործում է խոշոր արտադրող ընկերություն, որն ունի գերիշխող դիրք, այդուհանդերձ վերջին տարիներին գնալով ավելանում են ԵԱՏՄ երկրներից շաքարավազի ներմուծումներ իրականացնող ընկերությունների քանակը՝ այդ շուկայում նպաստելով մրցակցային միջավայրի կայացմանը:

Միաժամանակ նշենք, որ Հանձնաժողովի կողմից այդ ապրանքային շուկաներում ըստ ներմուծման ծավալների կենտրոնացվածության մակարդակը պարզելու նպատակով հաշվարկվել է Հերֆինդալ Հիրշմանի ինդեքսը (HHI)[1]: Այսպես օրինակ, ալյուրի գծով 2014 թվականին ինդեքսը կազմել է 2 630, իսկ 2016 թվականին 326, մարգարինի գծով 2016 թվականին կազմել է 653՝ 2014 թվականի 1 420–ի փոխարեն, բուսական յուղի գծով 2016 թվականին կազմել է 918՝ 2014 թվականի 1 379–ի փոխարեն, մակարոնեղենի գծով 2016 թվականին կազմել է 578՝ 2014 թվականի 728–ի փոխարեն, բանանի գծով 2016 թվականին կազմել է 4 220՝ 2014 թվականի 8 559–ի փոխարեն և այլն: Ընդհանուր առմամբ, լայն սպառման և սոցիալական նշանակության բազմաթիվ ապրանքային շուկաներում վերջին տարիներին արձանագրվել է մրցակցային միջավայրի էական բարելավում:

Գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման և բացահայտման նպատակով 2017 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները կենտրոնացվածության բարձր աստիճան և (կամ) սոցիալական կարևոր նշանակություն ունեցող ապրանքային շուկաների նկատմամբ վերահսկողության ուղղությամբ՝ նպատակ ունենալով դրանցում ապահովել հավասար մրցակցային պայմաններ, նպաստել տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու սպառողների շահերի պաշտպանությանը: Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը կատարել է մի շարք ուսումնասիրություններ՝ բացահայտելով նաև գերիշխող դիրքի չարաշահման դեպքեր: Այսպես օրինակ կատարված ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը գերիշխող դիրքի չարաշահում է արձանագրել «Շոկոլադե բատոններ» և «Շոկոլադե դրաժեներ» ապրանքային շուկաներում: Մասնավորապես, հիմք ընդունելով մամուլում շոկոլադե բատոնների ու դրաժեների իրացման գների իջեցման վերաբերյալ հրապարակումները, Հանձնաժողովն իրականացնել է ուսումնասիրություն նշված շուկաներում: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ գերիշխող դիրք զբաղեցնող «Սլավ Գրուպ» և «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերությունները իջեցրել են իրացվող ապրանքների գները, որը պայմանավորված չի

---

[1] Նշված ցուցանիշը շուկաներում կենտրոնացվածության մակարդակը բնութագրող և միջազգային պրակտիկայում օգտագործվող առավել տարածված ցուցանիշներից է, որը ստացվում է շուկայում ընկերությունների մասնաբաժինների քառակուսիների հանրագումարի արդյունքում: Այսպես օրինակ, եթե շուկայում գործում են չորս ընկերություններ, որոնցից առաջինի մասնաբաժինը 40 տոկոս է, երկրորդինը՝ 30 տոկոս, երրորդինը՝ 20 տոկոս, իսկ չորրորդինը՝ 10 տոկոս, ապա ցուցանիշը կհաշվարկվի հետևյալ կերպ՝ $HHI=40^2+30^2+20^2+10^2=3\ 000$: Ընդ որում, նշված ցուցանիշը մեկնաբանվում է հետևյալ կերպ. այն դեպքում, երբ կատարված հաշվարկների արդյունքում ցուցանիշը փոքր է 1500-ից, դիտարկվող շուկան կենտրոնացված չի համարվում, 1 500-ից 2 500-ի միջակայքում լինելու դեպքում համարվում է միջին կենտրոնացվածության, 2500-ից բարձր լինելու դեպքում՝ բարձր կենտրոնացվածության:

եղել տնտեսական գործոններով: Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից մանրածախ առևտրի օբյեկտներում իրականացված դիտանցումների արդյունքում արձանագրվել է, որ «Սլավ Գրուպ» և «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերությունները որոշ դեպքերում վերջիններիս պարտադրել են իրենց կողմից մատակարարվող ապրանքները սպառողներին իրացնել ցածր գներով: Հանձնաժողովի գնահատմամբ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից գների չհիմնավորված իջեցումը և առևտրի օբյեկտների կողմից սպառողներին շոկոլադե ապրանքների իրացման գների ամրագրմանն ուղղված գործողությունները կարող են հանգեցնել դիտարկվող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների շուկայից դուրս մղման, ինչպես նաև նշված գործողությունների հետևանքով շուկայում հնարավոր նոր մասնակցի մուտքը կարող է դառնալ տնտեսապես ոչ նպատակահարմար: Վերը նշված գործողությունները Հանձնաժողովը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և կիրառել պատասխանատվության միջոց:

Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումի հիման վրա Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև օդային բեռնափոխադրումների բնագավառում: Համաձայն դիմումատու ընկերությունների, «Յումաքս» ՍՊ ընկերությունը ստիպում է իրենց DHL ցանցով փոխադրված ապրանքների մասքային ձևակերպումներն իրականացնել իր հետ փոխկապակցված մաքսային միջնորդի միջոցով: Խնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող անձինք «Յումաքս» ՍՊ ընկերության վարքագծի արդյունքում կարող են հայտնվել անհավասար մրցակցային պայմաններում և դուրս մղվել շուկայից: Հանձնաժողովն իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ «Յումաքս» ՍՊ ընկերությունը հանդիսանում է «Դի Էյչ Էլ» (DHL) ընկերության բացառիկ ներկայացուցիչը Հայաստանում և ունի մենաշնորհ դիրք դեպի Հայաստան և Հայաստանից արտերկիր DHL ցանցով ապրանքների փոխադրումների շուկայում: Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ գործող մաքսային օրենսդրությամբ ապրանքների սեփականատերերը մաքսային ձևակերպումները կարող են իրականացնել անձամբ կամ մաքսային միջնորդի միջոցով: Ընդ որում, մաքսային միջնորդի ընտրությունը վերապահված է բացառապես ապրանքների սեփականատերերին և ապրանքներ փոխադրող անձինք իրավունք չունեն միջամտելու այդ գործընթացին: Իրականացված ուսումնասիրության արդյունքներով «Յումաքս» ՍՊ ընկերության վարքագիծը համարվել է գերիշխող դիրքի չարաշահում և ընկերության նկատմամբ

կիրառվել է պատասխանատվության միջոց:

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում շարունակել է ուշադրության կենտորնում պահել սոցիալական կարևոր նշանակության և կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող ապրանքային շուկաները՝ նպատակ ունենալով թույլ չտալ մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումներ: Այս առումով պետք է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում գնային էական փոփոխություններ են արձանագրվել կարագի շուկայում: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն 2017 թվականի տվյալներով այս ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունի «Ալեքս Հոլդինգ» ՍՊ ընկերությունը՝ 52 տոկոս մասնաբաժնով, որից բացի կարագի ներմուծմամբ են զբաղվում թվով 44 այլ տնտեսվարող սուբյեկտներ՝ շուկայի 40 տոկոս մասնաբաժնով, իսկ տեղական արտադրող ընկերություններին բաժին է ընկնում շուկայի 8 տոկոսը (տես՝ Գծանկար N 8):

Գծանկար N 8

Կարագի շուկայի կառուցվածքը 2017 թվականին՝ ըստ ներմուծող և արտադրող տնտեսվարող սուբյեկտների ներմուծման և արտադրության ծավալների



Ընդ որում, «Ալեքս Հոլդինգ» ՍՊ ընկերությունը ներմուծում է նոր-զելանդական կարագ՝ միջազգային շուկայում հայտնի Fonterra ընկերությունից: Նշված շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերության գները սկսել են բարձրանալ 2016 թվականի հոկտեմբեր ամսից և մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսը գնային բարձրացումը կազմել է շուրջ 82 տոկոս: Այդ նույն ժամանակահատվածում դիտարկվող ընկերության մոտ արձանագրվել է նաև ներմուծվող կարագի ձեռքբերման գնի բարձրացում, որը կազմել է 89 տոկոս: Հարկ է նշել նաև, որ միջազգային շուկայում կարագի գները սկսել են բարձրանալ 2016 թվականի հունիս ամսից, իսկ գերիշխող դիրք ունեցող ընկերությունը գները բարձրացրել է դրանից շուրջ 4 ամիս անց՝ այն ժամանակ, երբ բարձր արժեքով

ձեռքբերված կարագը ներմուծվել է Հայաստան և ազդել ընկերության կողմից իրացվող կարագի ինքնարժեքի վրա (տես՝ Գծանկար N 9): Միաժամանակ Հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք այլ կարևոր շուկաների հետ մեկտեղ այս շուկայում ևս վերջին հինգ տարիների ընթացքում արձանագրվել է կենտրոնացվածության մակարդակի նվազում, շուկայում ի հայտ են եկել նոր ընկերություններ, որոնք ներմուծումներ են իրականացրել ԵԱՏՄ անդամ երկրներից: Այսպես, եթե 2013 թվականին գերիշխող դիրք ունեցող ընկերության մասնաբաժինը կազմում էր 73 տոկոս, ապա 2017 թվականին այն արդեն կազմել է 52 տոկոս:

Գծանկար N 9

«Ալեքս Հոլդինգ» ընկերության կարագի իրացման և ձեռքբերման գների դինամիկան 2016-2018 թվականներին (կգ/դրամ)



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բենզինի շուկայի կենտրոնացվածությունը բարձր է և շուկայում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ՝ Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում ևս ուշադրության կենտրոնում է պահել բենզինի շուկան և իրականացրել ուսումնասիրություններ: Ընդ որում բենզինի ներմուծման կառուցվածքում մասնաբաժինները բաշխվել են հետևյալ կերպ. «Սիփիէս օիլ քորփորեյշն» ՍՊ ընկերություն՝ 46.6 տոկոս, «Ֆլեշ» ՍՊ ընկերություն՝ 42.8 տոկոս և «Մաքս պետրոլ» ՍՊ ընկերություն՝ 10.3 տոկոս և «Էյ բի էքսպորտ» ՍՊԸ՝ 0.3 տոկոս (տես՝ Գծանկար N 10):

Գծանկար N 10

Բենզինի ներմուծման կառուցվածքը 2017 թվականին՝ ըստ ներմուծող ընկերությունների



Միաժամանակ կատարված ուսումնասիրության համաձայն ողջ տարվա ընթացքում բենզինի գները ունեցել են բարձրացման միտումներ: Վերը նշվածի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից դիտարկվել են բենզին ներմուծող ընկերությունների ձեռքբերման գները, առկա պաշարների մնացորդային արժեքները, բենզինի միջազգային գները և այլ ցուցանիշները, որի արդյունքում պարզվել է, որ տեղի ունեցած գնային փոփոխությունները պայմանավորված են եղել բենզինի ձեռքբերման գների փոփոխություններով: Մասնավորապես բենզինի իրացման գները տարվա ընթացքում բարձրացել են շուրջ 80 դրամով՝ 2017 թվականի հունվար ամսվա 330 դրամից դեկտեմբեր ամսին դառնալով 410 դրամ, որն ամբողջությամբ պայմանավորված է եղել ընկերությունների ձեռքբերման գների փոփոխություններով (տես՝ Գծանկար N 11):

Գծանկար N 11

Ներմուծող ընկերությունների կողմից մեկ լիտր բենզինի ձեռքբերման և իրացման գների դինամիկան 2017 թվականի ընթացքում



Ըստ էության, գնային համադրելի փոփոխություններ եղել են նաև բենզինի միջազգային շուկաներում, իսկ ՀՀ-ում բենզինի ներմուծմամբ և իրացմամբ զբաղվող խոշոր ընկերությունների գործունեության ուսումնասիրության արդյունքում մրցակցային օրենսդրության խախտումներ չեն բացահայտվել:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու տեսանկյունից կարևոր է գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտման, կանխման, ինչպես նաև վերոնշյալ դրսևորումների դեմ արդյունավետ և հետևողական պայքարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը:

Հակամրցակցային համաձայնությունների առումով խնդրո առարկա են հանդիսանում տարբեր ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների այնպիսի գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Ինչպես ցույց են տալիս համապատասխան միջազգային փորձը և այս ոլորտում նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հակամրցակցային համաձայնությունների առումով առավել ռիսկային է համարվում պետական գնումների ոլորտը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից:

Հանձնաժողովը վերջին տարիներին զգալի աշխատանքներ է իրականացնում պետական գնումների ոլորտում առկա մրցակցային խնդիրները բացահայտելու նպատակով: Այս առումով ևս 2017 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է ուսումնասիրությունները սոցիալական, կրթական, բժշկական և այլ հաստատությունների գնումների ոլորտում, որոնց արդյունքում բացահայտված երևույթները թեև մրցակցության օրենսդրության տեսանկյունից հակամրցակցային համաձայնություններ չեն հանդիսացել, այդուհանդերձ դրանք կարող են ազդել մրցույթներում ազատ և արդար մրցակցային միջավայրի ձևավորման վրա:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից մի շարք պետական և համայնքային հաստատությունների պետական գնումների մրցույթներն ուսումնասիրելիս Հանձնաժողովը պարզել է, որ մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունը մատակարարել է մրցույթի պահանջներին չհամապատասխանող ապրանքներ: Այսպես օրինակ խտացրած կաթի մատակարարման մրցույթներում հաղթող ընկերությունը բազմաթիվ հաստատությունների մատակարարել է ոչ թե խտացրած կաթ, այլ այսպես

կոչված կաթ պարունակող խտացրած մթերք, որն ի հաշիվ դրանում բուսական յուղերի պարունակության ավելի էժան է, քան խտացրած կաթը, որում բուսական յուղերի առկայությունն արգելվում է: Նմանօրինակ դեպքեր են բացահայտվել նաև հալած յուղի ձեռքբերման համար հայտարարված մրցույթների ուսումնասիրության ընթացքում, երբ հալած յուղի փոխարեն մատակարարվել է բուսայուղային հալեցված խառնուրդ: Վերը նշվածի արդյունքում բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտի առաջարկած գները եղել են ավելի բարձր, և նրանք մրցույթներում հաղթող չեն ճանաչվել՝ դուրս մղվելով շուկայից:

Պետական գնումների մրցույթների ուսումնասիրությունների ընթացքում Հանձնաժողովը բացահայտել են այլ խնդիրներ ևս: Այսպես դիտարկված մրցութային փաթեթների ուսումնասիրությունից պարզվել է, որ եղել են դեպքեր, երբ մրցույթների հրավերներում բժշկական հաստատությունները նշել են կոնկրետ ապրանքային նշանի ապրանքներ, կամ էլ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել են այնպես, որ դրանց համապատասխանել են կոնկրետ ներմուծող կամ արտադրող ընկերության ապրանքները, ինչի արդյունքում բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ չեն կարողացել մասնակցել համապատասխան մրցույթներին և առաջարկել իրենց կողմից արտադրված և (կամ) ներմուծված ապրանքները:

Վերը նշված բոլոր դեպքերի կապակցությամբ Հանձնաժողովը բացահայտված խնդիրները ներկայացրել է մրցույթ իրականացնող հաստատություններին, ինչպես նաև այդ հաստատությունների վերադաս մարմիններին՝ նշված խնդիրները շտկելու և հետագայում դրանք բացառելու նպատակով: Այս կապակցությամբ նշենք, որ պետական գնումների ոլորտում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրները Հանձնաժողովի հետևողական աշխատանքների արդյունքում համապատասխան մարմինների կողմից լուծվել են:

Էլեկտրոնային լրատվական միջոցներով ավիագործակալների միության վերաբերյալ հրապարակված հոդվածի հիման վրա Հանձնաժողովը իրականացրել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ավիատոմսերի վաճառք իրականացնող ընկերությունները (ավիատոմսարկղեր) հիմնականում չունեն ուղիղ պայմանագրեր ավիաընկերությունների հետ (օրինակ՝ Աէրոֆլոտ, Ֆլայ Դուբայ, Ավստրիական ավիաուղիներ և այլն): Ավիաընկերությունների հետ ուղիղ պայմանագրեր ունեն միայն սահմանափակ թվով ընկերություններ, որոնք ունեն խոշոր ֆինանսական ռեսուրսներ, աշխատանքային համապատասխան տարիների փորձ և բավարարում են տվյալ ավիաընկերությունների հետ ուղիղ պայմանագրեր կնքելու համար այդ

ավիաընկերությունների կողմից սահմանվող այլ չափանիշներին: Միաժամանակ ավիաընկերությունների հետ ուղիղ պայմանագրեր ունեցող ընկերություններն իրենց հերթին ենթագործակալական պայմանագրեր են կնքում ավիատոմսեր վաճառող տասնյակ փոքր ընկերությունների հետ (ավիատոմսարկղ): Համաձայն գործող մեխանիզմի փոքր ընկերություններն (ավիատոմսարկղ) իրացված ավիատոմսերի դիմաց ստանում են համապատասխան վճար արտահայտված տոկոսներով՝ կախված տոմսի արժեքի և համապատասխան նվազեցումների տարբերության արդյունքում ձևավորվող գումարից: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ավիագործակալների միությունը սահմանափակել է իր անդամների միջև մրցակցությունը, որը դրսևորվել է հետևյալ կերպ.

Ավիագործակալների միությունն իր կանոնադրությամբ սահմանել է դրույթներ, որոնց համաձայն արգելում է իր անդամներին համագործակցության ավելի նպաստավոր պայմաններ առաջարկել և ենթագործակալական պայմանագրեր կնքել այն ավիատոմսարկղերի հետ, որոնց հետ արդեն իսկ աշխատում է միության մեկ այլ անդամ: Ըստ էության նման վարքագծի արդյունքում ռիսկեր են առաջանում, որ խոշոր ընկերություններն արհեստականորեն կարող են բաժանել շուկան միմյանց միջև: Մինչդեռ փոքր ընկերությունները (ավիատոմսարկղ), հանդիսանալով շահույթ հետապնդող կազմակերպություններ, որպես կանոն, ավիատոմսերի վաճառքի ենթագործակալական պայմանագրերը կնքում են այն խոշոր ընկերությունների հետ, որոնց կողմից տրվող գործակալական տոկոսավճարներն ավելի բարձր են: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ավիատոմսեր վաճառող փոքր ընկերությունները հնարավորություն չեն ստանում զարգանալու՝ ենթագործակալական պայմանագրեր կնքելով այն խոշոր ընկերությունների հետ, ում հետ ցանկանում են:

Վերը նշված փաստերը հիմք ընդունելով՝ Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում ընդունել է որոշում՝ միությանը տալով զգուշացում, հանձնարարելով վերացնել մրցակցության սահմանափակման վերը թվարկված երևույթները և հետագայում ևս ձեռնպահ մնալ մրցակցության օրենսդրության խախտումներ կատարելուց:

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացված ակտիվ աշխատանքի արդյունքում հնարավոր է դարձել ապահովել նաև հայկական կաթնամթերք արտադրող խոշոր ընկերության արտադրանքի անարգել ներկայացվածությունը ՌԴ շուկայում: Մասնավորապես Հանձնաժողով է դիմել «Դուստր

Մարիաննա» ՍՊ ընկերությունը՝ հայտնելով, որ խոչընդոտների է հանդիպում ՌԴ-ում իր արտադրանքի իրացման գործընթացում: Հանձնաժողովի և ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության կողմից իրականացված համատեղ ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ռուսական «Դեբոր» ընկերությունը գրանցել է «Մարիաննա» ապրանքային նշանը ՌԴ տարածքում դեռևս 2009 թվականին մի շարք ապրանքատեսակների, այդ թվում նաև կաթնամթերքի մասով: Իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ռուսական ընկերությունը երբևէ նման ապրանքային նշանով որևէ կաթնամթերք չի արտադրել, սակայն փորձում է խոչընդոտել հայկական ապրանքների մուտքը ՌԴ շուկա: Վերը նշվածից ելնելով ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության կողմից «Դեբոր» ընկերության նման վարքագիծը, որը հանգեցնում է մրցակցության սահմանափակմանը և մուտքի խոչընդոտներ է ստեղծում շուկայի մյուս մասնակիցների համար, որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, ինչի արդյունքում «Դուստր Մարիաննա» ընկերությունը հնարավորություն է ստացել անարգել արտահանելու իր ապրանքատեսականին «Մարիաննա» ապրանքային նշանով և իրացնելու ՌԴ տարածքում:

Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնում նաև ապրանքներ արտադրող (ներմուծող) և ապրանքներ ձեռքբերող և (կամ) իրացնող տնտեսվարող սուբյեկտների միջև ապրանքների մատակարարմանը վերաբերող որոշ խնդիրներ լուծելու ուղղությամբ: Այդ նպատակով կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշոր արտադրող (ներմուծող) ընկերությունների կողմից ապրանքների իրացման, ինչպես նաև խոշոր առևտրային ցանցերի կողմից ապրանքների ձեռքբերման հստակ և հրապարակային չափանիշների բացակայությունը կարող է անհավասար մրցակցային պայմաններ ստեղծել շուկայում գործող մրցակից ընկերությունների համար, ինչպես նաև հանգեցնել կոնկրետ ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի խաթարմանը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մրցակցային մարմինները նշված խնդիրները փորձում են կարգավորել նաև առանձին ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար բարեխիղճ վարքագծի կանոնների ներդրման միջոցով: Նշված վարքագծի կանոնները նախատեսում են ապրանքների մատակարարմանը վերաբերող հարցերի հստակեցում (մատակարարների ընտրության չափանիշներ, մատակարարների հետ գործարքների կնքմանը ներկայացվող պահանջներ, ապրանքների համար վճարման պայմաններ, զեղչերի, այլ արտոնությունների տրամադրման չափորոշիչներ և այլն), միտված են կանխարգելելու

համապատասխան ոլորտներում առկա կոռուպցիոն ռիսկերը և մրցակցային միջավայրը խաթարող պայմանավորվածությունները: Այս ուղղությամբ Հանձնաժողովն արդեն իսկ մշակել և ներդրել է «Դեղագործության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության բարեխիղճ վարքագծի կանոնների» կանոնագիրքը, որը նպաստում է դեղերի շրջանառության ոլորտում գործող ընկերությունների հարաբերությունների կանոնակարգմանը և փոխգործակցության ամրապնդմանը: Նշենք նաև, որ աշխատանքները շարունակվում են՝ այլ ոլորտներում ևս նման կանոնագրքերի մշակման և ներդման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նաև շարունակվել է համագործակցությունն այլ պետական մարմինների հետ, քանի որ իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ շատ դեպքերում հավասար մրցակցությունը խաթարող գործոնները ծնող պատճառներն առնչվում են այլ պետական մարմինների իրավասություններին, նրանց կողմից ընդունվող իրավական ակտերին, տրամադրվող լիցենզիաներին և այլն: Այս ուղղությամբ 2017 թվականի ընթացքում մի շարք ոլորտներում իրականացվել են ուսումնասիրություններ: Չնայած այն հանգամանքին, որ այդ ոլորտի ապրանքային շուկաներում մրցակցային խնդիրներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ բացահայտված խնդիրները գտնվել են այլ պետական մարմինների իրավասությունների ներքո և իրենց ազդեցությունն են թողել մրցակցային միջավայրի վրա: Ուստի այդ ուսումնասիրությունների արդյունքները տրամադրվել են համապատասխան իրավասու մարմիններին՝ վերջիններիս իրավասությունների և լիազորությունների կարգավորման շրջանակներում գտնվող ինչպես նաև տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների կարգավորման նպատակով:

Մրցակցության պաշտպանության և սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները փաստում են, որ դրանք առավել հաճախ դրսևորվում են SMS հաղորդագրությունների, գնապիտակների, բուկլետների, վահանակների, պաստառների, ինտերնետային կայքերի միջոցով և զանգվածային լրատվական միջոցներով տարածվող գովազդներում:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված

ուսումնասիրությունների արդյունքում մի շարք ընկերությունների գործողությունները որակվել են որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Այսպես, Հանձնաժողովի կողմից բացահայտված անբարեխիղճ մրցակցության դեպքերից ներկայացնենք հետևյալները.

Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ է իրականացրել կաթնամթերքի շրջանառության ոլորտում՝ մրցակցային խնդիրների բացահայտման նպատակով: Հանձնաժողովն իրականացրած դիտանցումներով արձանագրել է, որ մանրածախ իրացման ոլորտում գործող մի շարք տնտեսվարող սուբյեկտներ իրենց առևտրի օբյեկտներում ապրանքների գնապիտակների վրա իրացվող որոշ ապրանքներ մակնշել են որպես խտացրած կաթ և հալած պանիր, մինչդեռ նշված ապրանքների բաղադրությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց բաղադրությունում պարունակում են բուսական յուղեր: Հետևաբար նշված ապրանքները համաձայն մաքսային միության համապատասխան կանոնակարգի պահանջների որպես խտացրած կաթ և հալած պանիր մակնշվել չեն կարող: Բուսական յուղերի օգտագործման դեպքում վերը թվարկված ապրանքները համապատասխանաբար պետք է մակնշվեն որպես «կաթ պարունակող խտացրած սննդամթերք շաքարով» և «հալած պանիր պարունակող մթերք»: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտների նման գործողությունները Հանձնաժողովի գնահատմամբ կարող են առաջացնել հասարակության մոլորություն, ինչը հիմք ընդունելով Հանձնաժողովը դրանք որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություններ, կիրառել պատասխանատվության միջոցներ և պահանջել վերացնել խախտումները:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություն է իրականացվել նաև հեռուստատեսային գովազդի միջոցով կենցաղային ապրանքների վաճառք իրականացնող «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հեռուստատեսային գովազդի միջոցով ապրանքների վաճառք իրականացնող մեկ այլ ընկերություն՝ «Տելեմարկետ» ՍՊԸ-ն, «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության կողմից նոր ապրանքի առաջարկի դեպքում, անմիջապես սկսել է գովազդել նշված ապրանքները, թեև նման ապրանքներ գովազդի պահին ընկերությունում առկա չեն եղել: «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության դիրքորոշման համաձայն նման վարքագծի նպատակը իրենց գործունեության խաթարումն ու շուկայից դուրս մղելն է: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ «Տելեմարկետ» ընկերության պաշտոնական կայքում (www.telemarket.am) և ֆեյսբուքյան էջում (Telemarket)

ապրանքների գովազդման ընթացքում ապրանքների առաքման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել, որը սպառողի կողմից որոշում կայացնելու հարցում ունի էական նշանակություն: Միաժամանակ պարզվել է, որ «Տելեմարկետ» ընկերությունը հաճախ չի կարողացել ապահովել նշված պատվերների իրականացումը՝ դրանով իսկ վնաս հասցնելով «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության բնականոն գործունեությանը: Հանձնաժողովը «Տելեմարկետ» ընկերության նման վարքագիծը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում:

Հանձնաժողովն անբարեխիղճ մրցակցության դեպքեր է արձանագրել նաև շոկոլադե ապրանքների շրջանառության ոլորտում: Այսպես, Հանձնաժողով է դիմել «Գրանդ Քենդի» ՍՊ ընկերությունը՝ հայտնելով, որ շոկոլադե ապրանքների ներմուծում իրականացնող որոշ ընկերություններ Հայաստան են ներմուծում իրենց գրանցված ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման ապրանքային նշաններով շոկոլադե ապրանքներ: Հանձնաժողովի իրականացված ուսումնասիրությամբ պարզել է, որ «Գրանդ Քենդի» ՍՊ ընկերությունը դեռևս 2016 թվականին գրանցել է պանդայի, ձնեմարդու և պինգվինի տեսքով ապրանքային նշաններ, որոնք սպառողների շրջանում ունեն լայն ճանաչում և ապահովում են իրացման խոշոր ծավալներ: Միաժամանակ Հանձնաժողովն ուսումնասիրությամբ պարզել է, որ իսկապես որոշ ընկերություններ ներմուծում են պանդայի, ձնեմարդու և պինգվինի տեսքով շոկոլադե ապրանքներ, որոնք որպես ապրանքային նշաններ համապատասխան ընկերությունների անվանմամբ գրանցված չեն Մտավոր սեփականության գործակալությունում: Հանձնաժողովի գնահատմամբ նման ապրանքների իրացումը Հայաստանում կարող է շփոթություն առաջացնել սպառողների շրջանում: Կատարված ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն անբարեխիղճ գործողություն իրականացրած ընկերությունների նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոցներ և պահանջել վերացնել խախտումները:

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել գազավորված, շշալցված հանքային ջրերի շուկայում, որի համար հիմք է հանդիսացել ««Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊ ընկերության դիմումը: Դիմումատու ընկերությունը նշել է, որ հանդիսանալով «DILIJAN» ապրանքային նշանի իրավատերը՝ ներկայումս շուկայում հանդիպում է անբարեխիղճ մրցակցության դեպքերի հանքային ջրեր արտադրող մեկ այլ ընկերության կողմից: Հանձնաժողովն ուսումնասիրությամբ պարզել է, որ «DILIJAN» ապրանքային նշանը 2009 թվականից պատկանում է ընկերությանը, սակայն շուկայում

գործող մեկ այլ՝ «Էմ այ բի քոնսալթինգ» ՍՊ ընկերությունն արտադրում է հանքային ջրեր՝ որպես պատկերային նշան օգտագործելով «DILIJAN» ապրանքային նշանը: Վերը նշված գործողությունը Հանձնաժողովը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում և կիրառել պատասխանատվության միջոց:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում բացահայտել է նաև հասարակության մոլորեցման՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորման մի շարք դեպքեր, որոնք կապված են ապրանքի մակնշման, գովազդի ընթացքում ոչ ամբողջական տեղեկատվության ներկայացման և մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի խախտումների հետ:

Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում շարունակել է ուսումնասիրությունները համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ, որի նպատակն է թույլ չտալ նույն կամ միմյանց հետ փոխկապակցված ոլորտներում գործող տարբեր ընկերությունների՝ միավորումների միջոցով օրենսդրությամբ արգելված խոշորացումը և գերիշխող դիրքի ամրապնդումը: Հանձնաժողովի կողմից 2017 թվականի ընթացքում պատասխանատվության են ենթարկվել թվով 23 տնտեսվարող սուբյեկտներ, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումները:

Միաժամանակ Հանձնաժողովը շարունակել է տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրությունը: Այս առումով նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից կայացվել են համակենտրոնացումների թույլտվության 42, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին անձանց խումբ համարելու 23 որոշումներ:

Տնտեսական մրցակցության միջավայրի կարգավորման և վերահսկման տեսանկյունից կարևորվում են նաև Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքները՝ կապված դատական մարմիններում բողոքարկված որոշումների պաշտպանության հետ: Այդ կապակցությամբ 2017 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է իրականացնել դատական ներկայացուցչություն՝ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման արդյունքում իրականացված դատական վարույթներով: Մասնավորապես, 2017 թվականի ընթացքում ավարտվել են Հանձնաժողովի՝ նախկինում բողոքարկված որոշումների թվով 5 դատական վարույթներ, որոնց արդյունքում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռներով և որոշումներով Հանձնաժողովի բողոքարկված որոշումները թողնվել են անփոփոխ: 2017

թվականի ընթացքում բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 8 որոշում, որոնցից 1-ը մնացել է անփոփոխ, իսկ մնացած գործերով դատական քննությունը շարունակվում է:

3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը

Մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված առաջարկների շրջանակներում կարևորվում է օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Այդ կապակցությամբ Հանձնաժողովի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով մշակվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, շարունակվել են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության շրջանակում ՀՀ-ում գործող իրավական ակտերը ԵԱՏՄ-ում գործող իրավական ակտերին ներդաշնակեցման, ինչպես նաև Եվրամիության անդամ պետությունների լավագույն փորձի հիման վրա մրցակցության ոլորտին վերաբերող մի շարք օրենքների լրամշակման աշխատանքները: Վերոնշյալ նախագծերը, հավանության արժանանալով ՀՀ կառավարության կողմից, ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով, ընդունվել 2018 թվականի մարտի 23-ին և ներկայումս ամբողջությամբ օրինական ուժի մեջ են մտել: Այսպես, Օրենքում կատարվել են հիմնականում հետևյալ փոփոխությունները՝

1. նախատեսվել է Հանձնաժողովի անդամների նշանակման նոր կարգ՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրության միջոցով,
2. սահմանվել են Հանձնաժողովի անդամների կրթությանը և աշխատանքային փորձին վերաբերող լրացուցիչ չափանիշներ, ինչպես նաև հայերենին տիրապետելու պահանջ,
3. լրացվել են Հանձնաժողովի անդամի նշանակմանը խոչընդոտող, ինչպես նաև նրա լիազորությունների դադարման և վաղաժամկետ դադարեցման հիմքերը,
4. սահմանվել է տուգանքների որոշման այլ մոտեցում՝ կախված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի չափից, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ հաշվի առնել յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքները, կնպաստի իրավախախտման և դրա համար նախատեսված պատասխանատվության համաչափության սկզբունքի կիրառման արդյունավետության բարձրացմանը,
5. վարչական պատասխանատվություն է նախատեսվել պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց համար,

6. հստակեցվել և լրացվել են հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահման և անբարեխիղճ մրցակցության դրսևորումները, սահմանվել են համաձայնությունները հակամրցակցային չհամարելու հստակ հիմքեր և չափանիշներ,

7. որպես Օրենքի խախտում սահմանվել են տնտեսվարող սուբյեկտների և պետական մարմինների պաշտոնատար անձանց միջև հակամրցակցային համաձայնությունները,

8. սահմանվել են մի շարք հասկացություններ, այդ թվում՝ «խտրական պայմաններ», «մրցակցության սահմանափակման հատկանիշներ», «տնտեսական գործունեության համակարգում», «ուղղակի և անուղղակի վերահսկողություն», «չհիմնավորված բարձր և ցածր գին» հասկացությունները, հստակեցվել են անձանց խմբի և մի շարք այլ հասկացություններ,

9. իրականացվել է տուգանքների չափերի միասնականացում ըստ իրավախախտման ծանրության, ինչպես նաև տուգանքների կիրառման մոտեցումների միասնականացում,

10. իրականացվել է տուգանքի գանձման մեխանիզմների արդյունավետության բարձրացում,

11. միջազգային փորձի հիման վրա իրականացվել է մի շարք սկզբունքների, հասկացությունների հստակեցում, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների մասով,

12. պատասխանատվության միջոցներից ազատման կամ տուգանքի չափի նվազեցման վերաբերյալ ներդրվել են նոր մեխանիզմներ,

13. կատարելագործվել է համակենտրոնացման ինստիտուտը, այդ թվում՝ տարակերպ մեկնաբանությունների տեղիք տվող դրույթների վերացում, համակենտրոնացման արգելման չափանիշների հստակեցում:

Մրցակցային միջավայրի բարելավման նպատակով հաշվետու տարվա ընթացքում կատարվել է այլ օրենսդրական փոփոխություն ևս: Այսպես, 2017 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով առևտրային օբյեկտների քանակական ցուցանիշից բացի սահմանվել է նաև այդ օբյեկտներում շրջանառության ծավալի նվազագույն չեմ՝ տնտեսվարող սուբյեկտին գերիշխող դիրք ունեցող համարելու համար: Մասնավորապես, նախատեսվել է, որ առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե

հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ, որում ներառված առևտրային օբյեկտներում իրացման տարեկան շրջանառությունը գերազանցում է ընդհանուր 1.5 մլրդ դրամը:

Միաժամանակ սահմանավել է նաև կարգավորում, համաձայն որի՝ տնտեսավարող սուբյեկտ(ներ)ը չի (չեն) կարող համարվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա (նրանք), որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի (չեն) գերազանցում տվյալ շուկայի մեկ տասներորդը:

Մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել սպառողների և բիզնեսի շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցների, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով պարբերաբար հրապարակվել է տեղեկատվություն հասարակության և գործարար համայնքի համար հետարքրքրություն ներկայացնող բոլոր այն ուսումնասիրությունների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովը կատարել է հաշվետու տարվա ընթացքում:

Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների շրջանակներում 2017 թվականին պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ գործարար համայնքը ներկայացնող կազմակերպությունների, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների և ոլորտային տարբեր մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են մրցակցության ոլորտին առնչվող խնդրահարույց հարցեր: Այս առումով, կարևորվում են մասնակիցների առաջարկները, որոնց հիման վրա Հանձնաժողովը վերանայում է իր աշխատանքային գործունեության ուղղությունները և դրանք դարձնում առավել նպատակային ու արդյունավետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրներին, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահման երևույթների բացահայտմանը, հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը և անբարեխիղճ մրցակցության գործողությունների կանխարգելմանը, մուտքի խոչընդոտների բացահայտմանը, համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն առնչվող հարցեր:

Հաշվի առնելով օտարերկրյա ներդրումների կարևորությունը տնտեսության զարգացման գործում՝ 2017 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպվել է հանդիպում նաև ՀՀ-ում գործող ամերիկյան կապիտալով գործող

ընկերությունների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են գործարարության զարգացմանը խոչընդոտող խնդիրները, որոնք համաձայն միջոցառմանը մասնակցող ընկերությունների հիմնականում վերաբերում են տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող անհավասար վարչարարությանը, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանը և այլ խնդիրներին:

Հանձնաժողովը չունենալով մարզային կառույցներ՝ 2017 թվականի ընթացքում ակտիվ աշխատանքներ է իրականացրել մարզերում գործող ընկերույթունների հետ՝ մրցակցության ոլորտին վերաբերող խնդիրները բացահայտելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպվել են մի շարք մարզային այցելություններ, որոնց ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպել են տվյալ մարզում գործող ընկերությունների հետ: Կազմակերպված քննարկումների ընթացքում բարձրացված խնդիրների վերաբերյալ իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում վերացվել են մրցակցային միջավայրի զարգացմանը խոչընդոտող դրսևորումները:

Միաժամանակ Հանձնաժողովը, միանալով մրցակցության մարմինների համաշխարհային ընտանիքին, 2017 թվականի դեկտեմբերի 5-ին գործարար համայնքի ներկայացուցիչների և նրանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ միասին նշեց Մրցակցության համաշխարհային օրը: Միջոցառման շրջանակներում «Մրցակցության պաշտպանության ոլորտի ձեռքբերումներն ու խնդիրները ՀՀ-ում» թեմայով կլոր սեղան ձևաչափով քննարկմանը Հանձնաժողովը ներկայացրել է վերջին տարիներին կատարված աշխատանքների հիմնական արդյունքները, նախատեսվող օրենսդրական բարեփոխումների ընձեռած հնարավորությունները և մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ բոլոր պետական մարմինների համատեղ և նպատակային աշխատանքների կարևորությունը:

Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մրցակցային խնդիրները կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության հետ: Ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովն ի վիճակի չէ միայնակ պայքարելու առկա մրցակցային խնդիրների լուծման ուղղությամբ և անհրաժեշտ են բոլոր իրավասու պետական մարմինների ակտիվ և համակողմանի գործողությունները՝ մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով: Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովի կողմից բացահայտված այն բոլոր խնդիրները, որոնք բացասաբար են անդրադարձել մրցակցային միջավայրի վրա, սակայն գտնվել են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս, ներկայացվել են իրավասու պետական մարմիններին հետագա

ընթացքն ապահովելու նպատակով: Այս առումով Հանձնաժողովը շարունակել է համագործակցել այլ պետական մարմինների հետ հետևողական է եղել նշված խնդիրների լուծման հարցում:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջեով՝ որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս, նախատեսվել է 312 512,70 հազար ՀՀ դրամ, ծախսվել է 310 632,23 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովի տարեկան ծախսերը

(Հազար դրամ)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի ***Անվանումը***	***Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ***	***Դրամարկղային ծախս***
Ընթացիկ ծախսեր	*312.512,70*	*310.632,23*
▢ *Աշխատողների աշխատավարձեր և այլ հավելավճարներ*	*267.645,00*	*267.645,00*
▢ *Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում*	*14.795,30*	*14.795,30*
▢ *Էներգետիկ ծառայություններ*	*3.766,40*	*3.331,73*
▢ *Կոմունալ ծառայություններ*	*130,50*	*130,50*
▢ *Կապի ծառայություններ*	*4.847,00*	*4.258,50*
▢ *Ապահովագրական ծախսեր*	*200,00*	*200,00*
▢ *Տեղեկատվական ծառայություններ*	*577,80*	*342,60*
▢ *Ներքին գործուղումներ*	*2.800,00*	*1.100,39*
▢ *Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր*	*4.317,20*	*6.016,80*
▢ *Համակարգիչների ծրագրային ծառայություններ*	*200,00*	*35,00*
▢ *Ներկայացուցչական ծախսեր*	*500,00*	*499,90*
▢ *Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ*	*2.032,00*	*1.958,00*
▢ *Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում*	*2.826,00*	*2.661,56*
▢ *Գրասենյակային նյութեր և հագուստ*	*804,10*	*803,60*
▢ *Տրանսպորտային նյութեր*	*4.745,00*	*4.651,10*
▢ *Կենցաղային և հանրային սննդի նյութեր*	*152,00*	*152,00*
▢ *Հատուկ նպատակային այլ նյութեր*	*2.000.00*	*2.000,00*
▢ *Պարտադիր վճարներ*	*174,40*	*50,25*

Աղյուսակ

Համաշխարհային մրցունակության զեկույցում Հայաստանի և մի շարք երկրների մրցակցային միջավայրին առնչվող ցուցանիշների վերաբերյալ

Երկիր	Դիրք									
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017

Շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցությունը մրցակցության վրա

+105

Հայաստան	*133*	*129*	*133*	*133*	*90*	*75*	*93*	*79*	*51*	*28*
Ռուսաստան	79	92	88	101	107	93	75	69	59	64
Ղազախստան	89	87	91	93	83	78	68	57	69	91
Վրաստան	95	98	113	112	121	119	103	88	76	67
Մոլդովա	-	-	102	111	130	133	125	124	127	122
Ուկրաինա	75	91	128	129	108	132	129	98	99	106
Լատվիա	67	57	70	59	51	62	64	61	65	79

Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը

+98

Հայաստան	*132*	*132*	*138*	*138*	*116*	*97*	*105*	*88*	*77*	*40*
Ռուսաստան	95	107	108	111	124	116	102	83	82	83
Ղազախստան	90	92	113	121	95	91	94	68	83	84
Վրաստան	111	125	135	135	141	138	127	116	114	112
Մոլդովա	-	-	119	123	130	133	133	135	134	126
ՈՒկրաինա	96	111	126	136	132	137	136	136	136	124
Լատվիա	54	63	78	72	70	75	60	51	64	78

Տեղական մրցակցության ուժգնությունը										
			+70							
Հայաստան	***132***	***128***	***136***	***139***	***130***	***102***	***85***	***85***	***91***	***66***
Ռուսաստան	108	106	115	124	124	113	74	77	81	72
Ղազախստան	97	101	109	117	113	120	111	94	106	114
Վրաստան	114	115	124	128	127	123	105	91	78	94
Մոլդովա	-	-	101	104	108	119	99	103	114	95
Ուկրաինա	105	111	118	120	104	106	101	99	108	78
Ռումինիա	86	69	79	97	102	115	120	112	93	86